ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 28 » փետրվարի 2018 թվականի N: 14 ք.Գյումրի

ՄՈՒՐԱԴ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Մուրադ Մալխասյանի 2018 թվականի փետրվարի 26-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ժողովրդական գործիքների նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մուրադ Մալխասյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2018 թվականի փետրվարի 28-ից մինչև մարտի 7-ը ներառյալ:
2. Մուրադ Մալխասյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում «Գյումրու ժողովրդական գործիքների նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության նվագախմբի գեղարվեստական ղեկավար գլխավոր դիրիժոր Ջեմմա Քաղցրիկյանին:

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝